Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ ՇՀԱՊՁԲ 11/1-01/16 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ռեգուլյար և պրեմիում տեսակի բենզինների, դիզվառելիքի ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 1 մարտի 2016թ. ժ. 10:00

Մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ա. Պետրոսյանը | - | Գլխավոր տնօրենի տեղակալ(նախագահ) |
| Շ. Ալեքսանյանը | - | Գլխավոր հաշվապահ |
| Ա. Պողոսյանը | - | Ավտոտնտեսության վարիչ |
| Ա. Պետրոսյանը | - | ՊԲ-ի առաջատար մասնագետ (քարտուղար) |

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ ՇՀԱՊՁԲ 11/1-01/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրաված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

3. ԵՐՋԷԿ ՇՀԱՊՁԲ 11/1-01/16 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ռեգուլյար և պրեմիում տեսակի բենզինների, դիզվառելիքի ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1. ԵՐՋԷԿ ՇՀԱՊՁԲ 11/1-01/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝

- «Ֆլեշ» ՍՊԸ – (հասցեն՝ ք. Երևան, Ե. Կողբցու 30),

1.2. «Ֆլեշ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «Ֆլեշ» ՍՊԸ -ի գնային առաջարկը հետևյալն է՝

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ* | Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բենզին ռեգուլյար | 36 375 000 | 1 125 000 | 7 500 000 | 45 000 000 |
| 2 | Բենզին պրեմիում | 20 753 833.33 | 642 000 | 4 279 166.67 | 25 675 000 |
| 3 | Դիզվառելիք | 13 774 000 | 426 000 | 0 | 14 200 000 |

«Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից առաջարկած ընհանուր գումարը երեք չափաբաժիններով կազմում է 84 875 000 ՀՀ դրամ:

Հարց 2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրաված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել «Ֆլեշ» ՍՊԸ-ին:

2.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի `ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ գրաված մասնակիցին՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ին, ՀՀ կառավարության 2015 թ-ի հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը, կցելով նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերի պատճենները, տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրությունների և այլն) պատճենները, կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը :

Հարց 3. ԵՐԶԷԿ ՇՀԱՊՁԲ 11/1-01/16 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ռեգուլյար և պրեմիում տեսակի բենզինների, դիզվառելիքի ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

Սույն արձանագրության 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերը մասնակցից և ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցումն ստանալու օրվան հաջորդող օրը հանձնաժողովի անդամներին տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ:

Հանձնաժողի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Պետրոսյան

Անդամներ՝ Ե. Ալեքսանյան

Ա. Պողոսյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան